ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական
համալսարան» հիմնադրամի
Գիտական խորհրդի՝ 2023թ.-ի հոկտեմբերի
«10»-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝ _____Ե. Սերոբյան

Հիմք՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Գիտական խորհրդի 2012թ.-ի հոկտեմբերի 18-ի նիստում՝ հաստատված «ԳՊՄԻ»-ի «Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգ:
Գիտական խորհրդի նախագահ՝ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պետական և ներբուհական ուսանողական նպաստների և կրթաթոշակների հատկացման» կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ ՇՊՀ) ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրելու չափը, կարգն ու պայմանները, ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու չափը, կարգն ու պայմանները և պետական կրթաթոշակների հատկացման չափը, կարգն ու պայմանները:
2. Սույն Կանոնակարգի իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության 2006թ. հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի

թիվ 1430-Ն որոշումը, ՀՀ այլ իրավական ակտերը, ՇՊՀ-ի Կանոնադրությունը և այլն։

3. Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակի) ուսանողի ուսման վճարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, բուհի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին։
4. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին։
5. Սույն Կանոնակարգի դրույթները տարածվում են համապատասխան ուսուցման ձևերով (առկա, հեռակա, հեռավար) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով և մագիստրոսի կրթական աստիճաններով սովորող ուսանողների վրա։

II. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԼՈՒ ՉԱՓԸ, ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բուհերի համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների (կրթական ծրագրերի), բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը (ուսման վճարի լրիվ փոխհատուցվող), որը տեղափոխվում է կուրսից կուրս։
7. Պետությունը նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին համապատասխան
   1) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով, ընդ որում՝
      ա) առաջին կուրսում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում ընդունված ուսանողներին,
      բ) հաջորդ կուրսերում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝

մրցութային հիմունքներով: Սույն պարբերության պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած սովորողների վրա՝ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում,

գ) ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին: Թափուր տեղեր առաջանալու դեպքում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցումը կարող է տրամադրվել տվյալ մասնագիտության շրջանակում այլ կրթական ծրագրերի ուսանողների՝ սույն պարբերությամբ սահմանված կարգով.

դ) սույն ենթակետի «բ» և «գ» պարբերությունների պահանջները տարածվում են նաև վճարովի համակարգում սովորող՝ Լեռնային Ղարաբաղի և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած հայազգի ուսանողների, ինչպես նաև հայազգի այն օտարերկրյա ուսանողների նկատմամբ, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ.

2) Օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց՝

ա) «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց,

բ) 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխա ճանաչված անձանց, ֆունկցիոնալության ծանր և խորը, իսկ երեխաների դեպքում՝ նաև միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց՝

համաձայն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակներին, ծնողներին, ամուսնուն (կնոջը)՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

դ) զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակներին, ծնողներին, ամուսնուն (կնոջը)՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

3) Պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին, ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարող են սահմանվել նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողների ուսման վճարի փոխհատուցման այլ պայմաններ:

8. Համալսարանը տվյալ ուսումնական տարում անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների 10 տոկոսի չափով՝ իր միջոցների հաշվին՝ ըստ առաջադիմության փոխհատուցում է վճարովի ուսուցման համակարգի ուսանողների ուսման վարձը՝ ըստ Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազոր պետական մարմնի հաստատած մասնագիտություններին հատկացված տեղերի քանակի: Նշված տեղերը ենթակա են փոխատեղման:

III. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՉԱՓԸ, ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում, ըստ առաջադիմության, տրամադրում է՝

1) ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին՝ սույն Կանոնակարգի 10-րդ և 11-րդ կետերին համապատասխան.

2) սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ուսանողներին՝ սույն Կանոնակարգի 13-րդ և 14-րդ կետերին համապատասխան.
3) մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին՝ սույն Կանոնակարգի 14-րդ կետին համապատասխան.
4) առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող՝ երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին՝ սույն Կանոնակարգի 14-րդ կետին համապատասխան:

10. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին՝
ա) մինչև 5,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով,
բ) 5,01-10,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով,
գ) 10,01-15,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով,
դ) 15,01-20,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով,
ե) 20,01-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 90 տոկոսի չափով:

11. Սույն Կանոնակարգի 10-րդ կետով սահմանված փոխհատուցումը տրամադրվում է՝
1) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով կրթական աստիճանում՝
ա. առաջին կուրսում՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա,
բ. հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքներով միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) առավելագույն արժեքի առնվազն 60 տոկոսի շեմը հաղթահարելու դեպքում.
2) մագիստրոսի կրթական աստիճանում՝ առաջին կուրսում նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսի, իսկ հաջորդ կուրսերում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 70 տոկոսի շեմն ապահովելու դեպքում:

12. Սույն Կանոնակարգի 10-րդ կետով սահմանված փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ

սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը բուհին է ներկայացնում յուրաքանչյուր կիսամյակ՝ սույն Կանոնակարգի 23-րդ կետում սահմանված ժամկետներում:

13. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերում հաշվառված և վերջին հինգ տարում (այդ թվում ընդհանուր հանրագումարով) մշտապես բնակվող ու տվյալ համայնքներից որևէ մեկի հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտած ուսանողներին:

14. Սույն Կանոնակարգի 9-րդ կետի 2-4-րդ ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին փոխհատուցում տրամադրվում է՝
1) առաջին կուրս ընդունված ուսանողներին՝
ա. բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով,
բ. մագիստրոսի կրթական աստիճանի դեպքում՝ նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսը հաղթահարած ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով.
2) հաջորդ կուրսերում՝
ա. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 60,00-70,99 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով,
բ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 71,00-79,99 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 60 տոկոսի չափով,
գ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 80,00 տոկոս և բարձր ՄՈԳ ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 70 տոկոսի չափով:

15. Սույն Կանոնակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով և 9-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով սահմանված կարգավիճակները՝

1) ուսումնական տարվա ընթացքում (բացառության տվյալ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում) ձեռք բերելու դեպքում ուսանողական նպաստը տրամադրվում է տվյալ ուսումնական տարվա համար՝ սույն Կանոնակարգի 10-րդ, 11-րդ և 14-րդ կետերով սահմանված չափերին համապատասխան.

2) ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ձեռք բերելու դեպքում ուսանողական նպաստը տրամադրվում է տվյալ կիսամյակի համար՝ սույն Կանոնակարգի 10-րդ, 11-րդ և 14-րդ կետերով սահմանված տոկոսներին համապատասխան:

16. Սույն Կանոնակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով և 9-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին ուսումնառության ընթացքում համապատասխան կարգավիճակը կորցնելու դեպքում ուսանողական նպաստի փոխհատուցում չի տրվում ուսումնական հաջորդ տարվանից:
17. Սույն Կանոնակարգով սահմանված ուսման վճարի մասնակի փոխհատուցման մի քանի արտոնության հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է ուսման վճարի մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:
18. Բուհում մեկից ավելի մասնագիտություններով (կրթական ծրագրերով) նույն կրթական աստիճանով զուգահեռ ուսանելու դեպքում պետության կողմից նպաստի ձևով լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրվում է մեկ մասնագիտության (կրթական ծրագրի) համար:
19. Ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմինը:
20. ՇՊՀ-ն վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, ըստ կիսամյակների իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում բակալավրի (առկա, հեռակա) կրթական աստիճանում նախորդ կիսամյակում՝ 60,00 ՄՈԳ-ի շեմը հաղթահարելու դեպքում*, իսկ մագիստրոսի կրթական աստիճանում նախորդ կիսամյակում՝ 70,00 ՄՈԳ-ի շեմը հաղթահարելու դեպքում*, հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.
    1) Սոցիալապես անապահով (ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին - 30% զեղչ,
    2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ մինչև 23 տարին լրանալը - 50% զեղչ,
    3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ /միածնող/ ուսանողներին - 50% զեղչ,
    4) մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներին - 50% զեղչ,
    5) 3 և ավելի անչափահաս երեխա կամ 3 և ավելի ուսանող ունեցող ընտանիքների ուսանողներին - 30% զեղչ,
    6) 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին - 30% զեղչ,

* չի տարածվում 20-րդ կետի 17-րդ ենթակետի կարգավիճակ ունեցող ուսանողների դեպքում:

7) Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ - 30% զեղչ,
8) Սոցիալապես անապահով և ընտանիքի անապահովության գնահատման համակարգում հաշվառված (պետության կողմից սահմանված ընտանիքի անապահովության սահմանային միավորից ցածր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին - 20% զեղչ,
9) Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսցիչների երեխա-ուսանողներին - 30% զեղչ,
10) ՇՊՀ-ի աշխատակիցների երեխաներին ում եղբայրը (քույրը) սովորում է և (կամ) սովորել է ՇՊՀ-ում - 30% զեղչ,
11) Ներքոնշյալ ոլորտներում մարզական և ստեղծագործական հաջողություն ունեցող ուսանողներին. - 30% զեղչ.
   ա) Հայաստանի չեմպիոն ուսանողներ, Աշխարհի, Եվրոպայի և Օլիմպիական խաղերի մրցանակակիրներ,
   բ)արտասահմանյան կամ հանրապետական մենահամերգ կամ ցուցահանդես ունեցած ուսանողներ,
   գ)միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական օլիմպիադաների մրցանակակիրներ:
12) Փոխատեղման /ռոտացիա/ մրցույթի արդյունքում 0.1 միավոր տարբերությամբ վճարովի համակարգ տեղափոխված ուսանողներին - 50% զեղչ,
13) Պատերազմի և/կամ մարտական գործողությունների մասնակից անձանց սովորող երեխաներին և սովորող ամուսնուն (կնոջը) - 30% զեղչ:
14) Պատերազմի և/կամ մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած) եղբայր (քույր) ունեցող ուսանողներին - 30% զեղչ:
15) 3-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ուսանողներին - 30% զեղչ,
16) Պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահություն իրականացնող ուսանողներին – 20% զեղչ,
17) Լեռնային Ղարաբաղից 2023 թվականին բռնի տեղահանված ուսանողներին - 50% զեղչ:

21. Առանձնահատուկ դեպքերում ՇՊՀ-ի սովորողներին, ըստ կիսամյակների ուսման վարձի մասնակի փոխհատուցում կարող է տրամադրվել ռեկտորի կամ ՇՊՀ-ի մանդատային հանձնաժողովի անդամի առաջարկությամբ՝ ՇՊՀ-ի մանդատային հանձնաժողովի որոշմամբ:
22. Պետության և ՇՊՀ-ի կողմից ուսման վճարի մասնակի փոխհատուցումից օգտվելու համար, ուսանողը պետք է անհրաժեշտ փաստաթղթերը և դիմումը՝ ՇՊՀ ռեկտորի անունով, ներկայացնի բուհ՝ սույն Կանոնակարգի 23-րդ կետում սահմանված ժամկետներում: Ուսանողի կողմից սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված դիմումը չի քննարկվում:

23. Բուհում պետության, ինչպես նաև բուհի կողմից ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են՝

1) առկա կամ հեռավար ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

2) հեռակա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող մեկական շաբաթների ընթացքում:

23.1. Սույն Կանոնակարգի 9-րդ կետով սահմանված կարգավիճակները 23-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ժամկետներից հետո ձեռք բերելու դեպքում՝ համապատասխան կարգավիճակը ձեռք բերելու ուսումնական տարում ուսման վճարի փոխհատուցում ստանալու մասին դիմումներն ընդունվում են հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում՝ 23-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ժամկետներում՝ նախորդ ուսումնական տարում համապատասխան կարգավիճակը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

24. Ուսումնառությունն ընդհատած (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում):

25. Այլ պատճառներով ուսումնառությունն ընդհատած, այլ բուհերից, ՇՊՀ-ի այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից առկա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողներն ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ՇՊՀ-ի (տվյալ մասնագիտությունում) առկա ուսուցման համակարգում մեկ ուսումնական տարի (2 կիսամյակ) սովորելուց հետո:

26. Առաջին կուրսի ուսանողները ՇՊՀ-ի կողմից ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

IV. ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՉԱՓԸ, ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

27. Պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար

(արվեստի բնագավառի բուհերում՝ նաև մասնագիտական մրցույթ-ստուգատեսների հաղթողներին), ինչպես նաև նպատակային ուսուցմամբ սովորող սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին:

28. Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

1) մասնակցությունը ֆակուլտետի և բուհի ուսանողական, հասարակական աշխատանքներին.

2) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակած աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում).

3) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին.

4) այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնություններ՝ բուհի հայեցողությամբ:

29. Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից ՇՊՀ-ի ներքին կարգապահության կանոնների խստիվ պահպանմամբ: Նշված կանոնների խախտման առիթով ռեկտորի, պրոռեկտորների կամ ֆակուլտետի դեկանի կողմից տրված նկատողության հրամանները հիմք են պետական կրթաթոշակ չհատկացնելու համար:

30. Յուրաքանչյուր տարի ՇՊՀ-ի պետական կրթաթոշակների թվաքանակը և չափը հաստատում է ՀՀ կառավարությունը տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ՇՊՀ-ին հատկացված միջոցների սահմաններում: ՇՊՀ-ում պետական կրթաթոշակների հատկացման և հրամանագրման գործընթացը կազմակերպվում է ըստ սույն Կանոնակարգի 5-րդ գլխի 38-41-րդ կետերով:

31. 2023-2024թ. ուսումնական տարվանից առաջին կուրս ընդունված ուսանողների համար պետական կրթաթոշակ տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի թիվ 1430-Ն որոշման համաձայն:

32. Ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին՝ համաձայն Կանոնակարգի 27-28-րդ կետերով նախատեսված պայմանների: Թվարկված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Պետական կրթաթոշակից զրկված ուսանողը կարող է ընդգրկվել ուսումնական նպաստառուների համակարգում՝ Կանոնակարգի պահանջները բավարարելու դեպքում:

33. Ուսման վարձի փոխհատուցմամբ առկա ձևով ուսուցանող՝ 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխա ճանաչված ուսանողները, ինչպես նաև ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող ուսանողները հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում ստանում են կրթաթոշակ՝ 1-ին, 2-րդ

խմբի հաշմանդամություն և հաշմանդամ երեխա կարգավիճակ կամ ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունենալու ամբողջ ժամանակահատվածում՝ անկախ ստացվող այլ նպաստներից, թոշակներից կամ այլ դրամական վճարումներից:

34. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ ՇՊՀ-ում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետական կրթաթոշակի չափը:

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

35. Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմը ձևավորվում է ֆակուլտետի խորհրդի նիստում, ապա դեկանի կողմից ներկայացվում է ռեկտորի հրամանագրմանը: Հանձնաժողովի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ֆակուլտետի դեկանը, ֆակուլտետի կազմում գործող ամբիոնների վարիչները և ֆակուլտետի Ուսանողական խորհրդի նախագահը, Ռազմական ամբիոնի դեպքում՝ Ռազմական ամբիոնի պետը, ՊԴ կազմի մեկ ներկայացուցիչ և Ռազմական ամբիոնի Ուսանողական խորհրդի նախագահը:
36. Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի 20-ը՝ տվյալ ուսումնական տարվա համար*:
37. Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի գործառույթներից են՝
ա) ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների նախնական անվանացանկերի քննարկումը և հաստատումը,
բ) ՇՊՀ-ի կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում (զեղչ) ստացող ուսանողների նախնական անվանացանկերի քննարկումը և հաստատումը,
գ) պետական կրթաթոշակներ ստացող ուսանողների նախնական անվանացանկերի քննարկումը և հաստատումը:
38. Սույն Կանոնակարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի համապատասխան ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների անվանացանկերը և սույն Կանոնակարգի 4-րդ գլխի 27-28 կետերի համապատասխան պետական կրթաթոշակ ստացող ուսանողների

* Սույն Կանոնակարգի հաստատումից հետո, 2023-2024 ուստարում հետագա գործընթացների պատշաճ իրականացման համար, սույն Կանոնակարգի 35-րդ կետի պահանջներին համապատասխան ձևավորվում է ֆակուլտետի մանդատային հանձնաժողով:

անվանացանկերը, որոնք նախապես կազմվել են ֆակուլտետի դեկանի կողմից, ներկայացվում են ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի քննարկմանը: Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ կուրսի տվյալ մասնագիտությանը հատկացված նպաստների թվաքանակի, մրցութային հիմունքներով քննարկում է ուսման վճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող և պետական կրթաթոշակ ստացող ուսանողների անվանացանկերը: Անվանացանկերը և մանդատային հանձնաժողովի նիստի արձանագրությունները ստորագրվում են նախագահի և անդամների կողմից: Հատուկ կարծիքի առկայության դեպքում այդ մասին նշվում է արձանագրությունում:

38.1 Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը: Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

39. Սույն Կանոնակարգի 38-րդ կետով սահմանված մրցույթը կազմակերպվում է մինչև տվյալ ուսումնական տարվա առաջին երեք շաբաթներին հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

40. Ուսանողները ֆակուլտետի դեկանի կողմից տեղեկացվում են մրցույթի արդյունքների մասին մանդատային հաձնաժողովի նիստի հաջորդ աշխատանքային օրը: Դեկանի կողմից անվանացանկերը հրապարակելուց հետո անվանացանկերի վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են ֆակուլտետի մանդատային հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո ֆակուլտետի մանդատային հանձնաժողովն եռօրյա ժամկետում քննարկում է ներկայացված դիմում-բողոքները, հաստատում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում և պետական կրթաթոշակ ստացող ուսանողների նախնական անվանացանկերը՝ այն ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացնելով ՇՊՀ-ի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն՝ վերջնական ամփոփման:

Եռօրյա ժամկետում վերոնշյալ անվանացանկերում և արձանագրություններում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև անվանացանկերի կազմման ընթացակարգի այլ խախտումների դեպքերում ՇՊՀ-ի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնը պարտավոր է տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող և պետական կրթաթոշակ ստացող ուսանողների անվանացանկերը հետ վերադարձնելու տվյալ ֆակուլտետ՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում նոր մրցույթ կազմակերպելու և համապատասխան անվանացանկերը և արձանագրությունները ներկայացնելու պահանջով:

41. Սույն Կանոնակարգի 40-րդ կետում նշված անվանացանկերի և արձանագրությունների վերջնական ամփոփումից հետո մեկօրյա ժամկետում ՇՊՀ-ի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի կողմից հրամանագրման նպատակով ներկայացվում է ՇՊՀ-ի ռեկտորին:
42. Սույն Կանոնակարգի 20-րդ կետում նշված համապատասխան արտոնություն ունեցող ուսանողների նախնական անվանացանկը ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում է ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի քննարկմանը: Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովը քննարկում և հաստատում է ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների նախնական անվանացանկը: Անվանացանկը և մանդատային հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրվում են նախագահի և անդամների կողմից: Հատուկ կարծիքի առկայության դեպքում, այդ մասին նշվում է արձանագրությունում: Նախնական անվանացանկերը և մանդատային հանձնաժողովի նիստի արձանագրությունները ուսանողների դիմումների ընդունման վերջնաժամկետից հետո երկու շաբաթվա ընթացքում ֆակուլտետների դեկանները և Ռազմական ամբիոնի պետը ներկայացնում են Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժին:
43. Սույն Կանոնակարգի 42-րդ կետում նշված նախնական անվանացանկերը և արձանագրությունները ստանալուց հետո վերջիններս Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի անձնակազմի կողմից վերջնական ստուգվում են երկու շաբաթվա ընթացքում: Այդ ընթացքում անվանացանկերում և արձանագրություններում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև անվանացանկերի կազմման ընթացակարգի այլ խախտումների դեպքերում ՇՊՀ-ի Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժինը պարտավոր է ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների նախնական անվանացանկերը հետ վերադարձնելու տվյալ ֆակուլտետ՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում վերը նշված թերությունները վերանայելու և համապատասխան անվանացանկերը և արձանագրությունները ներկայացնելու պահանջով:
44. Սույն Կանոնակարգի 43-րդ կետում նշված ստուգված նախնական անվանացանկերը Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի պետը մեկօրյա ժամկետում ներկայացնում է ՇՊՀ-ի մանդատային հանձնաժողովի քննարկմանը, որից հետո համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողների անվանացանկերը մեկօրյա ժամկետում դեկանների կողմից հրապարակվում են ֆակուլտետներում:

VI. ՇՊՀ-ի ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

45. ՇՊՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորվում է ՇՊՀ-ի մանդատային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ՇՊՀ-ի ռեկտորը՝ նախագահ, Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենը, Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահը, Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի պետը, ֆակուլտետների դեկանները, Ռազմական ամբիոնի պետը, Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի պետը, Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի պետ-տնօրենը, Ուսանողական խորհրդի նախագահը, ֆակուլտետների և Ռազմական ամբիոնի մեկական ուսանող-ներկայացուցիչներ Ուսանողական խորհրդի առաջարկությամբ:
46. ՇՊՀ-ի մանդատային հանձնաժողովի գործառույթն է՝ ՇՊՀ-ի կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում (զեղչ) ստացող ուսանողների անվանացանկերի հաստատումը:
47. ՇՊՀ-ի մանդատային հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը: ՇՊՀ-ի մանդատային հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:
48. Ուսանողները ֆակուլտետի դեկանի կողմից տեղեկացվում են սույն Կանոնակարգի 44-րդ կետում նշված անվանացանկերի մասին ՇՊՀ-ի մանդատային հաձնաժողովի նիստի հաջորդ աշխատանքային օրը: Դեկանի կողմից անվանացանկերը հրապարակելուց հետո անվանացանկերի վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են ՇՊՀ-ի մանդատային հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո ՇՊՀ-ի մանդատային հանձնաժողովն եռօրյա ժամկետում քննարկում է ներկայացված դիմում-բողոքները, հաստատում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական անվանացանկերը և այն հրամանագրման նպատակով ներկայացնում է ՇՊՀ-ի ռեկտորին:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

49. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից։
50. Սույն Կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները կատարվում են ՇՊՀ-ի Գիտական խորհրդի կողմից։